

Գեղարքունիքի մարզպետն աշխատանքային այց կատարեց Սևան քաղաք

23.02.2017

Փետրվարի 22-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն աշխատանքային այցով եղավ Սևան քաղաքում: Սևանի թիվ 2 Զարթոնք մանկապարտեզում, Սևանի Սուրեն Զաքարյանի անվան մշակույթի պալատում և Սևանի բժշկական կենտրոնի նորակառույց շենքի շինհրապարակում մարզի ղեկավարը ծանոթացավ նախորդ տարվանից մեկնարկած և այս տարվա ընթացքում շարունակվող շինարարական աշխատանքներին, որոնք իրականացվում են ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի ֆինանսական միջոցների հաշվին: Ռաֆիկ Գրիգորյանը շինարարներին տվեց որոշակի ցուցումներ և հանձնարարականներ: Այս տարի ՀՀ կառավարության կողմից իրականացվող հրատապ ծրագրերի շրջանակներում Սևան քաղաքում կհիմնանորոգվեն քաղաքի Մարգիս Սևանեցի 7, 15, 21 բազմաբնակարան շենքերի տանիքները: Գեղարքունիքի մարզպետն աշխատանքային այցի ընթացքում եղավ նաև նշված շենքերի բակերում, ծանոթացավ իրավիճակին և հանձնարարեց նախապատրաստել շինարարության ընթացակարգերի հետ կապված փաստաթղթերը՝ տանիքների հիմնանորոգումը հնարավորինս արագ և սեղմ ժամկետներում ավարտին հասցնելու համար : ,, Այցիս նպատակն է ևս մեկ անգամ մանրակրկիտ ծանոթանալ հրատապ ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվող այն կառույցներին, որտեղ պետական միջոցներով իրականացվում կամ պետք է իրականացվեն շինարարական աշխատանքներ, որպեսզի ՀՀ կառավարության կողմից տրամադրվող միջոցները առավել արդյունավետ ծախսվեն,, -իս խոսքում նշեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: